ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1
N ԳՀԾՁԲ-10/7-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **04 -ը հուլիսի 2018թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Մ. Պողոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով **05.02.2018թ**. կնքված № ԳՀԾՁԲ-**10/7-1** գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, ինչպես նաև Պայմանագրին կից **21.03.2018թ**. կնքված N 1 համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) 3.4 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Հաշվի առնելով «Մաշտոցում» և «Շենգավիթում» տեղակայված ՀՀ ՊՆ համապատասխան ստորաբաժանումների լուծարման փաստը և «Կարճաղբյուրում» տեղակայված ՀՀ ՊՆ համապատասխան ստորաբաժանման տարածքում Պայմանագրով նախատեսված ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտությունը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում (Համաձայնագրում) կատարել փոփոխություն և դրա N 1 Հավելվածով նախատեսված «Մաշտոցի» **2 հա** և «Շենգավիթի» **2.3 հա** տարածքներում մատուցման ենթակա *ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայությունների (ախտահանման և կրծողների վերացման ծառայություններ)* փոխարեն այդ ծառայությունների մատուցումն իրականացնել «Կարճաղբյուրում» տեղակայված ՀՀ ՊՆ համապատասխան ստորաբաժանման **4.3 հա** տարածքում՝ ծառայության միավորի և ընդհանուր գները թողնելով առանց փոփոխության:

1.2 Պայմանագրի (Համաձայնագրի) գինը, գնման և վճարման ժամանակացույցերը, մնացած ծառայությունների տեխնիկական բնութագրերը թողնվում են առանց փոփոխության:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի (Համաձայնագրի) անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ք. Երևան Բագրևանդի 5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011117034 ՀՎՀՀ 02522157 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	«ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Խորենացու 160 «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Էրեբունու մ/ճ Հ/Հ 163068101498 ՀՎՀՀ 00402803 տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում 2018թ-ի փետրվարի 5-ին կնքված N ԳՀԾՁԲ-10/7-1 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր), ինչպես նաև Պայմանագրին կից 21.03.2018թ. կնքված N 1 համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) 2018թ-ի հուլիսի 4-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Հաշվի առնելով «Պատվիրատուի» մոտ կարիքի առաջացումը և «Կատարողի» գրավոր համաձայնությունը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում (Համաձայնագրում) կատարել փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: Հաշվի առնելով «Մաշտոցում» և «Շենգավիթում» տեղակայված ՀՀ ՊՆ համապատասխան ստորաբաժանումների լուծարման փաստը և «Կարճաղբյուրում» տեղակայված ՀՀ ՊՆ համապատասխան ստորաբաժանման տարածքում Պայմանագրով նախատեսված ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտությունը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում (Համաձայնագրում) կատարել փոփոխություն և դրա N 1 Հավելվածով նախատեսված «Մաշտոցի» 2 հա և «Շենգավիթի» 2.3 հա տարածքներում մատուցման ենթակա ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայությունների (ախտահանման և կրծողների վերացման ծառայություններ) փոխարեն այդ ծառայությունների մատուցումն իրականացնել «Կարճաղբյուրում» տեղակայված ՀՀ ՊՆ համապատասխան ստորաբաժանման 4.3 հա տարածքում՝ ծառայության միավորի և ընդհանուր գները թողնելով առանց փոփոխության: Պայմանագրի (Համաձայնագրի) գինը, գնման և վճարման ժամանակացույցերը, մնացած ծառայությունների տեխնիկական բնութագրերը թողնվում են առանց փոփոխության:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխությունը կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.5 և Համաձայնագրի 3.4 կետերը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ: Պայմանագրի (Համաձայնագրի) շրջանակներում տեխնիկական բնութագիրը փոխած ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ չի գերազանցում Պայմանագրի (Համաձայնագրի) գնի տասնհինգ տոկոսը: Առկա է պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունն այն մասին, որ փոխարինումը հանգեցնում է պայմանագրի արդյունավետ իրականացմանը

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության ԱՇԾ ԳՓՁ բաժնի պետ Ռ. Մարդոյանին:

Հեռախոս՝ 010-66-24-94:
Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:
Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն: